# ՀՀ ՕՐԵՆՔԸ «ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | ՀՕ-169-Ն |
| Տիպ | Օրենք |
| Ակտի տիպ | Հիմնական ակտ (09.05.2026-մինչ օրս) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | Միասնական կայք 2026.04.27-2026.05.10<br>Պաշտոնական հրապարակման օրը 08.05.2026 |
| Ընդունող մարմին | ՀՀ Ազգային ժողով |
| Ընդունման ամսաթիվ | 16.04.2026 |
| Ստորագրող մարմին | ՀՀ Նախագահ |
| Ստորագրման ամսաթիվ | 07.05.2026 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 09.05.2026 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

# Օ Ր Ե Ն Ք Ը

**Ընդունված է 2026 թվականի ապրիլի 16-ին**

## «ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Կատարողական վարույթի մասին» 2024 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-179-Ն օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) «ոստիկանությունը» բառը փոխարինել «Ծառայությունը» բառով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Իր լիազորություններն իրականացնելիս սույն օրենքի իմաստով հետախուզվող տրանսպորտային միջոց հայտնաբերելու դեպքում ոստիկանությունն իրավասու է իրականացնելու «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքով նախատեսված գործողությունները՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով Ծառայությանը:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հանրապետության նախագահ** **Վ. Խաչատուրյան**

2026 թ. մայիսի 7
Երևան
ՀՕ-169-Ն

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 8 մայիսի 2026 թվական:**